ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2023 թվականի N 1261 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 25-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված շարժական գույքը (այսուհետ՝ գույք) նվիրել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին (այսուհետ՝ հիմնադրամ) և Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիային՝ (այսուհետ՝ ֆեդերացիա) համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հիմնադրամի գործադիր տնօրենի և ֆեդերացիայի նախագահի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող նվիրատվության պայ-

մանագրերի կնքումը, դրանց հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ սահմանելով, որ պայմանագրերից բխող ծախսերը ենթակա են իրականացման հիմնադրամի և ֆեդերացիայի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ